

Անբիւն արեւելեան ու հարաւային ճակատին առջևը ծաղկնոց է. արեւմտեան ճակատին առջևը կանանչեղէններու ու պտղատու ծառերու պարտէզ է: Իսկ հիւսիսային ճակատին առջևը աստիճաններ (սէթէր) կան մինչեւ դունա գետը: Անբիւն հիմը դունայէն 37 կանգուն բարձր է. և որպէս զի ամենեւին կայծակէն վախ չունենայ, (ինչու որ հասարակօրէն բարձր տեղերը կայծակէ կրմնասին) բարձր երկթէ գաւազաններ կան տանեացը վրայ, որոնց ճօթը այնպիսի մետաղ մը կայ, որ կայծակը իրեն կը քաշէ, ու տունը անվնաս կը մնայ:

() Դն ալ շատ առողջարար է. անոր համար Ֆրանչիսկանները, որ ակնդրիայի մէջ շատ վանքեր ունէին, իրենց հիւանդանոցը հօր շինել տրվեր էին, ու իրենց գլխաւոր ժողովելու տեղը հոս սահմանած էին:

Ե:

Պ ա գ է ն :

Աննայէն հինգ սահաթ հեռու քաղաք մի է. որուն գետնէն բղխած տաք ջուրերը շատ անուանի են բոլոր գերմանիայի մէջ. ուսկից կանուկ իր անունն ալ. ինչու որ պատէն բաղնիք կը թարգմանվի: Աս պղտի քաղաքս ունի 412 տուն,

ու 3,400 բուն տեղացի բնակիչ, իսկ ամառը շրջակայ տեղվանքներէն անթիւ հիւանդոտ մարդիկ կը ժողովին, ան տեղաց բաղնիքները լըվացվելու համար, որոնցմէ շատերը կ'ուողջանան:

Աս ջուրերը զանազան տեղերէն կը բղխեն, բայց գլխաւորը Քալվարիէն ուրի ըսված լեռան տակէն կը բղխէ մարդու թևի հաստութեամբ, ու ջուրին տաքութիւնը 17 աստիճանէն, մինչև 28 աստիճան կը հասնի: Աս ջուրը ունի աւելի ծծմբի, աղի, երկաթի, ու ուրիշ հանգերու մասունքներ, ու զօրութի ունի մարդուն հորթը նորոգել, ծածտիքը բանալ, ու փափկացընել. ջիղերը ուժովըցընել, արեան շարժումը դիւրացընել, ու վնասակար հիւթերը ցնդել: Անոր համար աղէկ է անոնց, որոնք որ անդամներու ցաւ (մէճա) ունին. կամ որոնք որ շատ արիւն ունին, և կամ շատ տկար են:

Աս քաղաքս յառաջ շատ անշուք էր, մինչև զբօսանքի համար հասարակաց պարտէզ մը չունէր, բայց հիմա որովհետև երևելի գեղադնացութեան տեղ եղաւ, ու կայսրը, նաև երևելի իշխաններ, թէ աս տէրութի, և թէ օտար երկիրներէն կուգան, անոր համար շատ գեղեցիկ ու փառաւոր շէնքեր ու պարտէզներ շինվեցան: